Նոտարական ակտի կոդ: 600-20220528-37-5942046
Նոտարական ակտի գաղտնագիր: CQT7XD

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
Ք. ԱԲՈՎՅԱՆ, ՄԱՅԻՍԻ ԵՐԵՍՈՒՆԻՆ 30/05/2022 թ.
ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ՔՍԱՆԵՐԿՈՒ ԹՎԱԿԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ,
Իրավաբանական հասցեն՝ ք. Աբովյան , Բարեկամության 1,
Ի դեմս Աբովյան համայնքի ղեկավար՝ ԷԴՈՒԱՐԴ ՎԼԱԴԻՄԻՐԻ ԲԱԲԱՅԱՆԻ, ծնված՝ 09/08/1972թ-ին, ՀԾՀ՝ 1908720417, նույնականացման քարտ՝ 014263057, տրված՝ 019-ի կողմից, 21/12/2021թ-ին, հաշվառված՝ ԿՈՏԱՅՔ, ԱԲՈՎՅԱՆ, ԱԲՈՎՅԱՆ, Է. ԱՎԱԳՅԱՆ Փ., 47 Տ, ով գործում է համաձայն համայնքի կանոնադրության, այսուհետ՝ «ՎԱՐՁԱՏՈՒ» մի կողմից,
ԵՎ՝
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» Պետական մարմինը /հասցե՝ Հայաստան, ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Փ., 13, 0010, գրանցման համար՝ 286.184.1024769, ՀՎՀՀ՝ 02505511/ ի դեմս տնօրեն՝ ԱԳԼԵՍԱ ՌԱՖԻԿԻ ԱՂԱԲԱԲՅԱՆԻ, ծնված՝ 30/04/1977, , ՀԾՀ՝ 8004770010, անձնագիր՝ 009448887, տրված՝ 011-ի կողմից 26/07/2018թ-ին, հաշվարկված՝ ՀԱՅԱՍՏԱՆ, ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ԼԵՆԻՆԳՐԱԴՅԱՆ Փ., Շ 6, Բն. 44, ով գործում է համաձայն կանոնադրության, ում կողմից 29/03/2022թ, տրված թիվ 02/12-1/16040-22 լիազորագրով, հանդես է գալիս լիազորված անձ՝ «ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱԲՈՎՅԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՏՆՕՐԵՆ՝ ԷԼԻՏԱ ԿԱՄՈՅԻ ՌԱՖԱՅԵԼՅԱՆԸ, ծնված՝ 11/05/1986թ-ին, ՀԾՀ՝ 6105860706, անձնագիր՝ 012201968, տրված՝ 004-ի կողմից, 13/08/2020թ-ին, բնակության հասցե՝ ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՌՈՒԲԻՆՅԱՆՑ Փ., 9 Շ, 3ԲՆ, այսուհետ՝ «ՎԱՐՁԱԿԱԼ» մյուս կողմից,
Կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ
1.1. Համաձայն ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ավագանու 13/05/2022 թվականի թիվ՝ 54-Ա որոշման, սույն պայմանագրով Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ ***Մարզ Կոտայք, համայնք Աբովյան Աբովյան ք. Բարեկամության հրապարակ թիվ 1 /մեկ/ հասցեում գտնվող անշարժ գույքի մի մասը՝ 234.52 քմ. /երկու հարյուր երեսունչորս ամբողջ հիսուներկու/մակերեսով տարածքը, այսուհետ՝ «Անշարժ գույք», որի սխեմատիկ հատակագիծը կցվում է սույն պայմանագրին և համարվում է նրա անբաժանելի մասը ։ Հողամասի ծածկագիրը՝ 07-002-0044-0001 Շինության ծածկագիրը՝ 07-002-0044-0001-001***
1.2. Անշարժ գույքը պատկանում է Վարձատուին սեփականության իրավունքով, ըստ Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի՝ թիվ 1704772 տրված 05/08/2003 թ. :
1.3. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման տվյալների համաձայն «Անշարժ գույքի» նկատմամբ գրանցված սահմանափակումներ չկան, ինչը հավաստվում է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի «Աբովյան» սպասարկման գրասենյակի կողմից տրված N ՄՏ-27052022-07-0257 գաղտնաբառ՝ 0EZF23AJW3TX միասնական տեղեկանքով:
Տեղեկանքում տվյալները լրացված են «27» Մայիս 2022 թ. 10:24 դրությամբ :
Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ
Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականում գրառված ծածկագրերը համապատասխանեցված են գույքի նկատմամբ իրավունքների պետական միասնական էլեկտրոնային մատյանում լրացված տվյալներին:
ԱՌԿԱ ԵՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՝
Կոտայքի գյուղատնտեսական աջակցության մարզային կենտրոն ՓԲԸ, Ստույգ ՍՊԸ, Հայաստանի պատանեկան նվաճումներ ՀԿ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԻՄՆԱՐԿ, Հայաստանի Հանրապետություն, ի դեմս ՀՀ ԱՆ Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԻՄՆԱՐԿ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ»

1.5. Վարձակալության հանձնված Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի հիմք չէ սույն պայմանագիրը լուծելու կամ փոխելու համար:
1.6.Սույն պայմանագրի գործողության ողջ ժամանակահատվածի ընթացքում Վարձատուն Անշարժ գույքի նկատմամբ չունի տիրապետման և օգտագործման իրավունք:
1.7. Վարձակալը կարող է ենթավարձակալության տալ վերոհիշյալ գույքը կամ այլ ձևով օտարել դրա օգտագործման իրավունքը՝ միայն Վարձատուի համաձայնությամբ:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
2.1.ՎԱՐՁԱՏՈՒՆ իրավունք ունի՝
2.1.1.ՎԱՐՁԱԿԱԼԻՑ պահանջել Անշարժ գույքն օգտագործելու սույն պայմանագրի պայմաններին և Անշարժ գույքի նշանակությանը համապատասխան. 2.1.2. ՎԱՐՁԱԿԱԼԻ կողմից վարձը վճարելու ժամկետների էական խախտման դեպքում նրանից պահանջել վաղաժամկետ մուծելու վարձավճարը. 2.1.3.Պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները, եթե ՎԱՐՁԱԿԱԼԸ Անշարժ գույքից օգտվում է պայմանագրի պայմաններին կամ Անշարժ գույքի նշանակությանն անհամապատասխան.
2.2.ՎԱՐՁԱՏՈՒՆ պարտավոր է՝ 2.2.1.. Անշարժ գույքը վարձակալին հանձնել սույն պայմանագիրը ստորագրելու պահից՝ 10 (տաս) օրվա ընթացքում: 2.2.2.Անշարժ գույքը ՎԱՐՁԱԿԱԼԻՆ տրամադրել սույն պայմանագրի պայմաններին և Անշարժ գույքի նշանակությանը համապատասխան : 2.2.3. Անշարժ գույքը ՎԱՐՁԱԿԱԼԻՆ հանձնել դրա բոլոր պատկանելիքներով ու դրան վերաբերող փաստաթղթերով 2.2.4.Իր հաշվին կատարել Անշարժ գույքի հիմնական վերանորոգումը. 2.2.5.ՎԱՐՁԱԿԱԼԻՆ նախազգուշացնել Անշարժ գույքի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների (գրավ,սերվիտուտ և այլն) մասին. 2.2.6.ՎԱՐՁԱԿԱԼԻ պահանջի դեպքում անհատույց վերացնել Անշարժ գույքի թերությունները կամ իջեցնել վարձավճարը:
2.3.ՎԱՐՁԱԿԱԼՆ իրավունք ունի՝ 2.3.1 Այլ կազմակերպությունների հետ կնքել պայմանագրեր՝ վարձակալված Անշարժ գույքը սպասարկելու և էներգետիկ կամ այլ միջոցներով ապահովելու վերաբերյալ :

2.4.ՎԱՐՁԱԿԱԼԸ պարտավոր է՝ 2.4.1. Ժամանակին մուծել Անշարժ գույքն օգտագործելու համար սույն պայմանագրի 3 կետում նախատեսված վճարը (վարձավճարը). 2.4.2.Անշարժ գույքը պահպանել պատշաճ վիճակում , իր հաշվին կատարել դրա ընթացիկ վերանորոգումը և կրել Անշարժ գույքը պահպանելու համար անհրաժեշտ ծախսերը. 2.4.3. Սույն պայմանագրի ժամկետը լրանալուց հետո վարձակալվող Անշարժ գույքը ենթակա է վերադարձման «Վարձատուին» այն վիճակով, ինչպես հանձնվել է՝ հաշվի առնելով նրա բնականոն մաշվածությունը:

2.4.4. Շրջապատը պահել մաքուր վիճակում. 2.4.5. Կատարել բոլոր անհրաժեշտ վճարումները 2.4.6. ՎԱՐՁԱՏՈՒԻՑ պահանջել իրեն տրամադրել Անշարժ գույքի պատկանելիքներն ու դրան վերաբերող փաստաթղթերը.

2.4.7. Անշարժ գույքի օգտագործմանն ամբողջովին կամ մասնակիորեն խոչընդոտող թերություններ հայտնաբերելիս, իր ընտրությամբ՝ ա/ ՎԱՐՁԱՏՈՒԻՑ պահանջել անհատույց վերացնելու Անշարժ գույքի թերությունները կամ համաչափ իջեցնելու վարձավճարը կամ հատուցելու Անշարժ գույքի թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը. բ/ ՎԱՐՁԱՏՈՒԻՆ նախապես տեղեկացնելով՝վարձավճարից պահել տվյալ թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերի գումարը, գ/ Պահանջել վաղաժամկետ լուծելու պայմանագիրը, դ/ Պահանջել նվազեցնելու վարձավճարի չափը, եթե հանգամանքների ուժով, որոնց համար ինքը պատասխանատվություն չի կրում, Անշարժ գույքի վիճակը վատթարացել է, ե/ Պահանջել համապատասխան չափով նվազեցնելու վարձավճարը, զ/ Պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները.

2.4.8.ՎԱՐՁԱՏՈՒԻ կողմից սույն պայմանագրի 2.2.4. կետում նշված պարտականությունը չկատարելու դեպքում, պահանջել նվազեցնելու վարձավճարը: 2.4.9. Սույն պայմանագրի ձևակերպման հետ կապված ծախսերը կատարվում են Վարձակալի կողմից:

3.ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ

3.1.Վարձավճարի չափը կազմում է ամսական՝ ***52 000 /հիսուներկու հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:***

4.ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Կողմերը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գույքային պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով իրենց պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

4.2.Տուժանքի (տուգանքի կամ տույժի) վճարումը կողմերին չի ազատում նրանց վրա դրված պարտականությունները կատարելուց կամ խախտումները վերացնելուց:

4.3.ՎԱՐՁԱՏՈՒՆ պատասխանատվություն չի կրում Անշարժ գույքի այն թերությունների համար, որոնք նա նշել է սույն պայմանագիրը կնքելիս, կամ որոնք նախապես հայտնի են եղել ՎԱՐՁԱԿԱԼԻՆ կամ պետք է ՎԱՐՁԱԿԱԼԻ կողմից հայտնաբերվեին Անշարժ գույքը զննելիս կամ Անշարժ գույքը վարձակալության հանձնելիս , դրա սարքինությունը ստուգելիս:

5.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

5.1. Սույն պայմանագիրը կնքված է համարվում 01/04/2022 թվականից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը և ուժի մեջ է մտնում սահմանված կարգով վարձակալի իրավունքները ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումում իրավունքների պետական գրանցման պահից:

5.2.Կողմերից յուրաքանչյուրը ցանկացած ժամանակ կարող է հրաժարվել պայմանագրից՝ 3/երեք/ ամիս առաջ այդ մասին ծանուցելով մյուս կողմին:

6.ՎԱՐՁԱԿԱԼԱԾ ԳՈՒՅՔԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆԵՐԸ 6.1.Վարձակալած գույքից ՎԱՐՁԱԿԱԼԻ կատարած բաժանելի բարելավումները համարվում են նրա սեփականությունը:

6.2. Եթե Վարձակալը իր միջոցների հաշվին կատարել է վարձակալված գույքից անբաժանելի բարելավումներ՝ առանց դրան վնաս պատճառելու , ապա սույն պայմանագիրը դադարելուց հետո Վարձակալն իրավունքն ունի հատուցում ստանալ Վարձատուից այդ բարելավումների արժեքի չափով:

6.3.ՎԱՐՁԱԿԱԼԻ կողմից առանց ՎԱՐՁԱՏՈՒԻ համաձայնության կատարված վարձակալած Անշարժ գույքից անբաժանելի բարելավումների արժեքը չի հատուցվում:

6.4.Վարձակալած գույքի ամորտիզացիոն միջոցների հաշվին կատարած, ինչպես բաժանելի , այնպես էլ անբաժանելի բարելավումները համարվում են ՎԱՐՁԱՏՈՒԻ սեփականությունը:

7.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

7.1.Սույն պայմանագիրը ժամկետից շուտ կարող է լուծվել ՀՀ Օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում:

7.2. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է համապատասխան դատարանի քննությանը:

8. Պայմանագրի դադարումը 8.1. Սույն պայմանագիրը դադարում է՝ 8.1.2. Պայմանագրի ժամկետը լրանալու դեպքում: 8.1.3. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:8.1.4. Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքում և կարգով պայմանագիրը վաղաժամկետ լուծելու դեպքում:8.2. Սույն պայմանագիրը կարող է միակողմանի վաղաժամկետ լուծվել վարձակալի կողմից՝ա/ ցանկացած հիմքերով՝ դրա մասին մեկ ամիս առաջ գրավոր ծանուցելով վարձատուին:8.3. Սույն պայմանագիրը վարձատուի կողմից կարող է միակողմանի վաղաժամկետ լուծվել, եթե՝ա/ վարձակալը 3 ամիս ուշացնում է վարձավճարի մուծումը.8.4. ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հիմքերով կամ սույն պայմանագրի խախտումների դեպքում:

9.ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա է գրանցման Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանմունքում՝ 30 (երեսուն) աշխատանքային օրյա ժամկետում:

9.2.Սույն պայմանագրում կատարված փոփոխությունները և լրացումները օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից և վավերացված է նոտարական կարգով:

9.3. Պայմանագրի գործողությունը կարող է դադարել կողմերի համաձայնությամբ ցանկացած այլ ժամկետում:9.4.Կողմերի անվանման գտնվելու վայրի բանկային վավերապայմանների փոփոխման կամ վերակազմավորման դեպքում նրանք պարտավոր են եռօրյա ժամկետում միմյանց գրավոր տեղեկացնել տեղի ունեցած փոփոխությունների մասին:

9.5.Սույն պայմանագիրը կողմերի համաձայնությամբ կազմված է հայերեն լեզվով, 4/չորս/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, որոնցից մեկը պահվում է նոտարի մոտ, իսկ մյուս օրինակները տրվում է կողմերին: Բնօրինակ է համարվում նոտարի մոտ պահվող օրինակը:

9.6. Պայմանագիրը կողմերը ընթերցել են նոտարի ներկայությամբ: Պայմանագրի բովանդակությունը բավարարում է կողմերի պահանջները:

ԿՈՂՄԵՐ, ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎԱՐՉԱՏՈՒ՝
ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ղեկավար ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ

ՎԱՐՉԱԿԱԼ՝

_____ երկու հազար քսաներկու թվականին, սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ Հայաստանի Հանրապետության **«ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ»** նոտարական տարածքի

նոտար _____ ի կողմից:

Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագիրը ստորագրած անձանց ինքնությունը, նրանց գործունակությունը, ինչպես նաև իրավաբանական անձի իրավունակությունը, նրա ներկայացուցչի լիազորությունները և անշարժ գույքի նկատմամբ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի իրավունքները ստուգված են:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 611 հոդվածի համաձայն, սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի պետական կադաստրի համապատասխան ստորաբաժանումում:

Գրանցված է գրանցամատյանում՝ 4894 ով:

Գանձված է պետական տուրք հինգ հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասնհինգ հազար ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար ՆՈՒՆԵ ՄԱՐՏԻՆԻ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 մայիսի 2022 թվականի N 54-Ա

ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻՑ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայության Աբովյանի տարածքային կենտրոնի տնօրենի դիմումը (մուտք՝ 2022 թվականի ապրիլի 26-ի N Պ-555), Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2003 թվականի օգոստոսի 5-ի N 1704772 վկայական) Աբովյան քաղաքի Բարեկամության հրապարակի թիվ 1 հասցեում գտնվող համայնքապետարանի վարչական շենքի առաջին հարկից Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայությանը վարձակալության իրավունքով տրամադրել 234.52 քառակուսի մետր մակերեսով տարածք (հատակագիծը կցվում է):
2. Պայմանագիրը կնքել մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի վարձավճարի ամսական չափը սահմանել 52 000 (հիսուներկու հազար) դրամ:
4. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքը վարձակալության իրավունքով տրամադրելու վերաբերյալ պայմանագիր կնքելու, դրանում փոփոխություն կատարելու և լուծելու մասին որոշումներն ընդունում է Աբովյան համայնքի ղեկավարը:
5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայության կողմից:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից և տարածվում է 2022 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա:

Կողմ -14

Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ	Ն. ՋԱՐԳԱՐՅԱՆ	Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ռ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ	Դ. ՋԱՐՈՅԱՆ	Ա. ՄԵՂՐՅԱՆ
Ա. ԲԱԴԱԼՅԱՆ	Ա. ԹԵՆԵՔԵՋՅԱՆ	Ս. ՍԵԹՐԱԿՅԱՆ
Գ. ԳԱԼՍՏՅԱՆ	Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ	Ա. ՔՈՍԱԿՅԱՆ
Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ	Է. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	

Դեմ -0
Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ

ՇԵՆՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

Մ1:200

(մասշտաբը)

Վկայականի համարը 1704772

Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

(ստորագրություն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱՊԵՏԱՐԱՆ *03561498* ՎԱՐՉԱՊԵՏ